ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.03.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-09/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-09/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2014թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-09/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտնել է, որ 27.02.2014թ. մասնակցել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգին: Ընկերության աշխատակիցը, ուսումնասիրելով վերոնշյալ ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագիրը, պարզել է, որ ընկերությանը հետաքրքրող A4 ֆորմատի թուղթը 11-րդ չափաբաժինն է, որտեղ նշված են եղել հետևյալ բառերը՝ թուղթ A4 (210 x 297) մմ ձևաչափի չկավճած, գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Սպիտակությունը 90%-ից ոչ պակաս, 1մ^2, թղթի զանգվածը՝ 80գ, սակայն նշված չի եղել տուփերի քանակը, այնինչ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ տեխնիկական բնութագրում պետք է նշվի գնման առարկայի չափը, այսինքն՝ A4 ֆորմատի թղթի համար դա կլինի տուփերի քանակը:

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն, վերը նշված ընթացակարգի տեխնիկական բնութագիրը ուսումնասիրելուց հետո, հրավերին կից գնման ժամանակացույցից ընտրել է 11-րդ

չափաբաժինը, որտեղ հստակ նշված է եղել 100 (հարյուր) տուփ A4 ֆորմատի թուղթ ամբողջ տարվա համար, այնուհետ կազմել է գնային առաջարկ 100 տուփի համար՝ նշելով ամբողջ գումարը՝ ներառյալ ԱԱՀ-ն (168.000 ՀՀ դրամ):

Սակայն, մրցույթի բացման նիստից հետո, Ընկերությանը հայտնի է դարձել, որ նույն հրավերում կա ևս մեկ գնման ժամանակացույց, որը թյուրիմացություն է առաջացրել ընկերության համար, քանի որ նշված ժամանակացույցի 11-րդ չափաբաժնով նախատեսվել է A4 ֆորմատի թղթի ևս 200 (երկու հարյուր) տուփ: Այսինքն, գնման առարկան հանդիսացել է 300 տուփ A4 ֆորմատի թուղթը, մինչդեռ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը ներկայացվել է 100 տուփի գնով:

Ընկերության կարծիքով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը տեխնիկական բնութագրի և գնման ժամանակացույցի մասով, այսինքն տեխնիկական բնութագրում պետք է նշվեր ընդհանուր թվով (300 տուփ) գնման ենթակա ապրանքի քանակը:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ Ընկերությունը խնդրել է «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 11-րդ չափաբաժինը համարել չեղյալ:

2. **<u>ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>.**

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկը 12.03.2014թ. N ՀՍ/1-139-14 գրությամբ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ բողոք ներկայացնող անձը նշել է, որ «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում չի նշվել 11-րդ չափաբաժնով գնման ենթակա ապրանքի քանակի ընդհանուր թիվը, իսկ որպես իրավական հիմնավորում վկայակոչվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը:

Մինչդեռ, ոչ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը, ոչ էլ գնումների օրենսդրության այլ դրույթներ չեն սահմանում պահանջ, համաձայն որի ապրանքի տեխնիկական բնութագրում պետք է նշվի ապրանքի քանակը, որովհետև տեխնիկական բնութագիրը ներառում է ոչ թե քանակական հատկանիշները, այլ ապրանքի տեխնիկական տվյալները:

Երկրորդ, մասնակիցը նշել է. «...հրավերում երկու գնման ժամանակացույցի առկայությունը հանգեցրել է թյուրիմացության, որի պատճառով ընդհանուր գինը ներկայացվել է մեկ գնման ժամանակացույցով...»:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկը հայտնել է, որ թյուրիմացության պատճառը եղել է ոչ թե երկու գնման ժամանակացույցի առկայությունը, այլ այն, որ մասնակիցը մինչև վերջ չի ծանոթացել հրավերին, ընդ որում, այդ մասին նշվել է անմիջապես բողոք ներկայացնող անձի բողոքում. «... սակայն մրցույթի բացման նիստից հետո մենք տեղեկանում ենք, որ նույն հրավերում կա ևս մեկ գնման ժամանակացույց...»:

Բացի այդ, երկու գնման ժամանակացույցի առկայությունը չէր կարող թյուրիմացություն առաջացնելու հնարավորություն ստեղծել, քանի որ յուրաքանչյուր գնման ժամանակացույց ունեցել է տարբերվող անվանումներ, մասնավորապես՝ առաջինի անվանումը եղել է «04. ՀՀ քաղաքաշինության նախարարի աշխատակազմի պահպանում, Բաժին 01, խումբ 01, դաս 01», իսկ երկրորդի անվանումը՝ «01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, Բաժին 06, խումբ 06, դաս 01»:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկը նշել է, որ գնման և վճարման ժամանակացույցերի 11-րդ չափաբաժնի քանակը յուրաքանչյուր դեպքում եղել է տարբեր: Հետևաբար հրավերից ակնհայտ է, որ դրանք նույնը չեն, իսկ գնման առարկայի ընդհանուր քանակը կազմում է երկու գնման ժամանակացույցերում նշված քանակների հանրագումարը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի համաձայն. «...Եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով...»:

Հետևաբար մասնակցի ներկայացրած գնային առաջարկը վերաբերվում է 11-րդ չափաբաժնով գնման առարկայի ընդհանուր քանակին: Միևնույն ժամանակ, բողոք ներկայացնող անձի պահանջը վերաբերվում է գնման գործընթացը 11-րդ չափաբաժնի մասով չեղյալ համարելուն, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով սպառիչ սահմանվում են խորհրդի կողմից ընդունվող որոշումների շրջանակը, որտեղ նման որոշում ընդունելու իրավասություն սահմանված չէ:

<u>3. ԳԲԽ-09/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել. Ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով դադարեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

4. ԳԲԽ-09/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-09/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 07.03.2014թ. ներկայացված բողոքը, «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), գնահատող հանձնաժողովի 05.03.2014թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությունը, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.03.2014թ. Կենտրոնին ներկայացված N ՀՍ/1-139-14 գրությունը և գրությամբ ներկայացված փաստաթղթերը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) եզրակացությունը:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որը բաղկացած է եղել թվով 43 չափաբաժիններից:

Ընթացակարգի 11-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն:

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն 07.03.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, 11-րդ չափաբաժնի մասով գնման առարկա հանդիսացող «Թուղթ A4 ֆորմատի» ապրանքատեսակի տուփերի քանակը

տեխնիկական բնութագրում չի նշվել, ինչպես նաև Ընթացակարգի հրավերին կից գնման ժամանակացույցերը թյուրիմացություն է առաջացրել ընկերության համար:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկը 12.03.2014թ. N ՀՍ/1-139-14 գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ պահանջ, համաձայն որի ապրանքի տեխնիկական բնութագրում պետք է նշվի ապրանքի քանակը, որովհետև տեխնիկական բնութագիրը ներառում է ոչ թե քանակական հատկանիշները, այլ ապրանքի տեխնիկական տվյալները: Բացի այդ, երկու գնման ժամանակացույցի առկայությունը չէր կարող թյուրիմացություն առաջացնելու հնարավորություն ստեղծել, քանի որ յուրաքանչյուր գնման ժամանակացույց ունեցել է տարբերվող անվանումներ, մասնավորապես՝ առաջինի անվանումը եղել է «04. ՀՀ քաղաքաշինության նախարարի աշխատակազմի պահպանում, Բաժին 01, խումբ 01, դաս 01», իսկ երկրորդի անվանումը՝ «01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, Բաժին 06, խումբ 06, դաս 01»:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ գնման և վճարման ժամանակացույցերի 11-րդ չափաբաժնի քանակը յուրաքանչյուր դեպքում եղել է տարբեր, հետևաբար հրավերից ակնհայտ երևում է, որ դրանք նույնը չեն, իսկ գնման առարկայի ընդհանուր քանակը կազմում է երկու գնման ժամանակացույցերում նշված քանակների հանրագումարը:

Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, 11-րդ չափաբաժնով գնման ենթակա ապրանքի համար սահմանվել է հետևյալը՝ անվանումը՝ թուղթ A4 ֆորմատի 1 /21X29.7/, չափման միավորը՝ տուփ/500 հատ, գնման առարկայի բնութագիրը՝ թուղթ A4 (210 x 297) մմ ձևաչափի չկավճած, գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար, սպիտակությունը 90%-ից ոչ պակաս, 1մ^2, թղթի զանգվածը՝ 80գ:

Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, ներկայացվել են գնման ժամանակացույցեր հետևյալ անվանումներով.

- Իրականացվող ծրագիր՝ «04. ՀՀ քաղաքաշինության նախարարի աշխատակազմի պահպանում, Բաժին 01, խումբ 01, դաս 01», որով Ընթացակարգի 11-րդ չափաբաժնով 2014թ. գնման ենթակա «Թուղթ, A4 ֆորմատի 1 /21x29.7» ապրանքատեսակը նախատեսվել է գնել 1-ին եռամսյակում՝ 45 տուփ, իսկ 3-րդ եռամսյակում՝ 55 տուփ (ընդամենը՝ 100 տուփ):
- Իրականացվող ծրագիր՝ «01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, Բաժին 06, խումբ 06, դաս 01», որով Ընթացակարգի 11-րդ

չափաբաժնով 2014թ. գնման ենթակա «Թուղթ, A4 ֆորմատի 1 /21x29.7» ապրանքատեսակը նախատեսվել է գնել 1-ին եռամսյակում՝ 100 տուփ և 2-րդ եռամսյակում՝ 100 տուփ (ընդամենը՝ 200 տուփ):

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած գնային առաջարկով սահմանել է, որ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից տրամադրված «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝ 11-րդ չափաբաժնով «Թուղթ A4 ֆորմատ» ապրանքատեսակի համար, նշելով արժեքը՝ 140.000 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն՝ 28.000 ՀՀ դրամ, առաջարկված ընդհանուր գինը՝ 168.000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.03.2014թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ որոշում է կայացվել N 11-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 18-րդ և 19-րդ կետերը սահմանում են «գնման առարկա» և «գնման առարկայի բնութագիր» հասկացությունները: Մասնավորապես համաձայն վերոհիշյալ կետերի՝ գնման առարկան հանդիսանում է գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը, իսկ գնման առարկայի բնութագիրը կազմում է գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները: Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

«ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (ծանուցման) ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Ընթացակարգի հրավերին (ծանուցմանը) կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածի տարբեր մասերում սահմանվել են երկու հատ 11-րդ չափաբաժին՝ գնման ենթակա միևնույն ապրանքատեսակի համար, որոնցով նախատեսվել են մատակարարման տարբեր ժամկետներ և տարբեր քանակներ, հստակ չեն նկարագրվել ապրանքատեսակների ձեռքբերման պայմանները՝ հանգեցնելով այլընտրանքային մեկնաբանության, ինչը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Աստղիկ գրատուն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել:

2. Ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով դադարեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՔՆ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Լիդիա Պողոսյան